

**«ՄԵԼԳՈՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՓԱԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՅԵՏՍ ՊԵՏՔ Է ԿՈՉՈՒՒ»
Կ'ԸՍԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻԱՆԱՊԵՏԸ**

Ն. Ա. Տ. Մեսրոպ Ս. Պատրիարք Յօր յարուցած դատական հայցի մասին Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան հրապարակած մամլոյ զեկոյցին կապակցութեամբ Պատրիարքական Աթոռի Դիւանապետ՝ Արժ. Տ. Գրիգոր Աւագ Բահանայ Տամատեան ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Դժուար է հասկնալ, թէ Միջին Արեւելքի ամենահամբաւաւոր վարժարաններէն՝ Նաեւ Երոմիութեան սահմաններուն մէջ գործող սակաւաթիւ կրթօճախներէն մէկը փակելու որոշումը ի՞նչպէս կրնայ օգուտ պատճառել Յայ ժողովուրդի շահերուն: Կը հաւատանք, որ քանի մը վարչայիններու կողմէ առնուած սոյն որոշումը սխալ է:

«ՅԲԸՄիութեան Կեդրոնական Վարչութիւնը յայտարարեր է, թէ պիտի շարունակէ յարգել ինչպէս հանգուցեալ Կարապետ Մելգոնեանի՝ այնպէս նաեւ բազմաթիւ այլ բարերարներու տեսիլքը՝ յօգուտ աշխարհասփիւռ հայութեան: Նշանաւոր խօսք, որով ՅԲԸՄիութիւնը հրապարակաւ խոստովանած կ'ըլլայ, թէ այս Միութեան համաձայն պոլսահայերը աշխարհասփիւռ հայութեան մաս չեն կազմեր: Արդարեւ, ի տարբերութիւն Կիւլպէնկեան Յիմնարկին եւ Աբգարեան Կտակին, ՅԲԸՄիութիւնը վերջին եօթանասունեւհինգ տարիներու ընթացքին շատ ալ չէ հետաքրքրուած թէ պոլսահայերը ի՞նչպէս կը մաքառին իրենց ազգապատկան հաստատութիւնները մատակարարելու համար: Շնորհակալութեամբ ստացուած են բնականաբար այն մանր գումարները զորս բարերարներ բարի եղած են ուղարկել ՅԲԸՄիութեան միջոցներով:

«Կիպրոսի Մելգոնեան Կրթական Յաստատութիւնը բաց պահելը Մելգոնեան Եղբայրներու տեսիլքը յարգելու միակ միջոցն է: Եթէ չի փափաքիր աշխարհասփիւռ Յայութեան ներկանալ որպէս անվստահելի հաստատութիւն, ՅԲԸՄիութիւնը պետք է հրաժարի Մելգոնեան Կրթական Յաստատութիւնը փակելու եւ ազգապատկան կալուածները վաճառելու որոշումէն: Մարդիկ ՅԲԸՄիութեան պէս բարեգործական հաստատութիւններու ինչո՞ւ նուիրատուութիւն ընեն, եթէ կեդրոնական վարչութեան մի քանի անդամ յետ մահու արդարութիւն պիտի չընեն հանգուցեալ բարերարներու յիշատակին եւ կամ չյարգեն իրենց թողած կտակներուն տրամադրութիւնները:

«ՅԲԸՄիութիւնը պետք է տեղեկութիւն հրապարակէ նաեւ, թէ 1926-էն ի վեր Մելգոնեան Կտակը ի՞նչպէս կառավարած է: Որպէս Երանաշնորհ Չաւէն Պատրիարքի այժմու յաջորդը՝ Ամենապատիւ Մեսրոպ Պատրիարքը իր պաշտօնին բերումով հետաքրքրուած է, թէ կտակի տրամադրութիւնները պատասխանատուութեամբ յարգուած են, թէ ո՞չ: Ամէն բարենպատակ ու մարդասիրական կազմակերպութիւն համարատու պետք է ըլլայ հանրութեան եւ պետք չէ անարգանք նկատէ երբ իրմէ հաշուետուութիւն պահանջուի: ՅԲԸՄիութեան վարիչները, որոնք իրենց սեփական հարստութիւնը կը նուիրեն բարենպատակ գործերու, բնականաբար խորապէս կը գնահատուին բովանդակ Յայութեան կողմէ: Այնուհանդերձ, ատիկա չի նշանակեր որ իրենք արտօնուած

Են ըստ կամս վարուելու այլ բարերարներու կատարած նուիրատուութիւններուն հետ:

«Ամենապատիւ Պատրիարք Յայրը արդէն իսկ ազնիւ գտնուած ու իրեն դիմող Քալիֆորնիաբնակ հայազգի միջնորդներուն պատրաստակամութիւն յայտնած Է Պոլիս այցելելիք պատուիրակութեան մը անդամներն ընդունելու: Յոյսով ենք, որ համայն Եւրոպայի հայութիւնը հետաքրքրող այս կարեւոր ու նուրբ հարցին իմաստալից լուծում մը կը գտնուի: Արդարութիւնը մեծապէս կատարուած պիտի ըլլայ եթէ ԶԲԸՄիութիւնը յետս կոչէ Սելգոնեան Կրթական Զաստատութիւնը փակելու որոշումը: Այս Է մեր Պատրիարքութեան ցանկութիւնն ու աղօթքը, որուն համաձայն են աշխարհի չորս անկիւններուն տարածուած Սելգոնեան սաները:»